

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Վարդուհի Քալանթար, Կեդրոնական բանրի կիներուն բաժինը, Ստանպուլ, «Արաս» հրատարակչություն, 2022, 103 էջ:

Յակոբ Օշական գրեց «101 տարուան» ընդհանուր խորագրով վէպերու եռագրութիւնը (*Հաճի Ապրալլահ, Հաճի Մուրադ, Հաճի Սիւլէյման*), բայց վաստակաւոր գրագէտը թրքական բանտէն անցած չէր: Համեմատաբար քիչ են այդ փորձառութիւնը ունեցողները հայ գրականութեան մէջ: «Արաս» հրատարակչատունէն վերջերս լոյս տեսած հատորիկը՝ Վարդուհի Քալանթար-Նալբանդեանի *Կեդրոնական բանրի կիներու բաժինը*, ո՛չ միայն մամուլի էջերէն (այս անգամ՝ Պոլսոյ երբեմնի *Հայ կին* ամսաթերթէն) կը փրկէ վկայութիւն մը այդ բանտին մասին, այլ մանաւանդ՝ կանացի վկայութիւն մը:

Ինչպէս պատմաբան Լեոնա Էքմէքժիօլու կը շեշտէ իր ընդարձակ ու մանրամասն յառաջաբանին մէջ (էջ 7-30), այս վկայութիւնը եզակի է, քանի որ համիտեան թրքական բանտին մասին գրող կիներ չեն եղած Միջին Արեւելքի մէջ: Եւ մանաւանդ՝ կիներու բաժնին մասին, որ ի հարկէ գրեթէ փակ աշխարհ մըն էր տղամարդոց համար, եթէ բացառենք իոն մտնող պահակները, բժիշկները, են.: Ուրեմն՝ այս վկայութիւնը բացառիկ արժէք մը կը ստանայ:

Վարդուհի Քալանթար-Նալբանդեանի նկարագրականը, որ հաւանաբար նոթագրութիւններու հիմամբ կատարուած է, կ'ուրուագծէ բանտային աշխարհ մը, ուր բաւական իրապաշտ գոյներով կը ծանօթանանք տարբեր ազգերու պատկանող կիներու գոյակցութեան, իշխանութեան ներքին պայքարներուն, արտաքին իշխանութեան հետ փոխարաբերութիւններու բնոյթին եւ էական կարեւորութեան, բանտարկեալներու ընկերային հիւսուածքին: Նկարագրութիւնը գրուած է անպաճոյճ, սակայն գրական ծիրք մատնող լեզուով, ուր չեն պակսիր յատուկ համ ու հոտ ընծայող թրքերէն բառերն ու նախադասութիւնները, որոնց համար յատուկ բառարան մը աւելցուած է վերջաւորութեան (էջ 97-102): Քալանթար-Նալբանդեան պարզ նկարագրող մը չէ, այլ նաեւ առիթը ունեցած է իր ճանչցած կարգ մը կերպարներու հոգեբանական գիծերը ուրուագրելու: Այս համադրութիւնն է, որ առաւել կշիռ ու արժէք կ'ընծայէ վկայութեան:

Պէտք է դիտել տալ, որ Քալանթար-Նալբանդեան աւելի զբաղած է պատմելով իր տեսածն ու լսածը, քան ընթերցողին առջեւ փռելով իր ներքին աշխարհը: Անձնակեդրոն պատում մը չէ, ինչպէս սովորաբար կ'ըլլան յուշերը: Թերեւս ամենէն անձնական պահերը գրի առնուած են «Այցելութեան օրը» գլուխին մէջ, ուր ընդամէնը երկու էջով կը նկարագրէ այրերու բաժնին մէջ արգելափակուած հօր տուած այցելութիւնները «սպասումի ու տարակոյսի, զրկանքի ու տառապանքի այդ տարիներուն» (էջ 84):

Իր ներաճական ուսումնասիրության մեջ, Էքմէքճիօղլու վերականգնած է Քալանթար-Նալբանդեանի (1895-1978)՝ ամերիկահայ գաղութի կէս մոռցուած դէմքի մը կենսագրութիւնը: Լոզանի համալսարանը իր ուսումը ստացած այս հայուհին դուստրն էր ագուլեցի կրթական մշակ Դաւիթ Քալանթարեանցին (1847-1918), որ 1888էն ետք մանկավարժական գործունէութիւն տարած էր Օսմանեան կայսրութեան մէջ, 1890-1910ին սեփական վարժարան ունենալով Գոնիոյ մէջ, իսկ 1910-15՝ իբրեւ Պոլսոյ հայկական դպրոցներու ընդհանուր քննիչ: Հօր ու մօր՝ Թագուհի Մանիսալեանի հետ (նոյնպէս դաստիարակ), 1915ին ձերբակալուած է օսմանեան իշխանութիւններուն կողմէ, որպէս թէ նամակներու մէջ ինչ-ինչ հակաթրքական արտայայտութիւններ ունեցած ըլլալուն համար, մինչ հայրը ամբաստանուած է Գոնիոյ մէջ հակապետական գործունէութեամբ՝ իր դպրոցական օրերէն: Քալանթարեանի պատմածներուն եւ իր իսկ արխիւային պրպտումներուն շնորհիւ, Էքմէքճիօղլու վերակազմած է անոնց դատաւարութեան ամփոփ պատմութիւնը: Մինչ մայրը անպարտ արձակուած է (ու յետոյ կամովին բանտ վերադարձած՝ դուստրը առանձին չձգելու համար), հայր ու աղջիկ նախ ցմահ բերդարգելութեան դատապարտուած են Չորլուի մէջ, որ յետոյ վերածուած է հինգ տարուան բանտարկութեան Պոլսոյ կեդրոնական բանտին մէջ, շնորհիւ, ըստ Քալանթար-Նալբանդեանի, Պուլկարիոյ թագուհիին եւ Սպանիոյ թագաւորին միջամտութեան: Այդ երկիրներու արխիւներուն մէջ կը մնայ փնտռել այս միջամտութիւնը վկայագրող փաստաթուղթերը:

Դաւիթ Քալանթարեան եւ իր աղջիկը ազատ արձակուած են 1918ին, Պրետտ-Լիթօվսկի դաշնագրի մէկ տրամադրութեան շնորհիւ, որուն համար պարտական էին իրենց ռուսական հպատակութեան: Բանտէն դուրս ելլելէ քանի մը ամիս ետք, Դ. Քալանթարեան մահացած է: Վարդուհի Քալանթար աշխուժ գործունէութիւն ունեցած է զինադադարին, Պոլսոյ մէջ, ուր նաեւ աշխատակցած է *Հայ կիւն*ին եւ 1920-21ին հրատարակած իր բանտային յուշագրութիւնը:

Այնուհետեւ մեկնած է Միացեալ Նահանգներ, ուր ապրած է մինչեւ կեանքին վերջը: Ամուսնացած է քիմիագէտ եւ հանրային գործիչ Զաւէն Նալբանդեանի հետ (1890-1973): Որդեգրած են Զարեանդ գրչանունը եւ միասնաբար հրատարակած երկու թրքագիտական աշխատութիւններ 1926ին. *Միացեալ եւ անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը* եւ *Կրնա՞նք հաշտուիլ թուրքերուն հետ*: Հետաքրքրական է, որ այս աշխատութիւններէն առաջինը, կը գրէ Էքմէքճիօղլու, յաճախ վերագրուած է միայն Զաւէն Նալբանդեանին, ստուերի տակ ձգելով անոր կնոջ հաւասարագոր մասնակցութիւնը: Գիրքը գրեթէ անմիջապէս թարգմանուած է ռուսերէնի (1930, Անտրէ Մանտելշթամի յառաջաբանով), իսկ 1970ականներէն սկսեալ՝ անգլերէնի (1971, Վահագն Տատրեանի կողմէ), ֆրանսերէնի (1989), արաբերէնի եւ պարսկերէնի: Հատորը մինչեւ այսօր արժէքաւոր

սկզբնաղբիւր մըն է համաթուրանականութեան երեւոյթի ուսումնասիրութեան համար:

Վարդուիի Քալանթար-Նալբանդեան լայնօրէն աշխատակցած է հայ մամուլին, յատկապէս՝ Պոստոնի *Հայրենիք* օրաթերթին եւ ամսագրին, ինչպէս եւ անգլերէն շաբաթաթերթին, մինչեւ 1970ականները, այլազան նիւթերու նուիրուած յօդուածներով: 1965-66ին է, որ վերստին անդրադարձած է 1915ի դատավարութեան ու բանտարկութեան պարագաներուն, ինչպէս եւ 1979ին՝ յետմահու լոյս տեսած (ինքնա)կենսագրական ակնարկի մը մէջ:

Լեռնա Էքմէքճիօղլու յիշած է հայ բանտային գրականութեան քանի մը գործեր ու անուններ (Վահան Թէքէեան, Թէոդիկ, Արտաշէս Սօլախեան, նաեւ Միսաք Գօջունեանի եւ Սմբատ Բիւրատի վէպերը): Հոս կ'արժէ անել-ցնել Շաարշ Միսաքեանի անունը, որուն յուշերը լոյս տեսած են թերթօնով *Յառաջ* օրաթերթին մէջ (1934), ապա գիրքով (1957) եւ, Արփիկ Միսաքեանի աշխատանքին շնորհիւ, լոյս տեսած են վերստին բնագրով եւ ֆրանսերէն թարգմանութեամբ (2015):

Արեւելահայ ճակատին վրայ, Էքմէքճիօղլու յիշած է երկրորդ կնոջական պատում մը՝ Էլլէն Բիւզանդի *Հայուհիները Երեւանի Չէկայի բանտում* յուշագրութիւնը (1965), որ նկարագրած է դաշնակցական կին գործիչներու բանտարկութիւնը Հայաստանի խորհրդայնացումէն ետք մինչեւ փետրուարեան ապստամբութիւնը: Պէտք է յիշել նաեւ նոր լոյս տեսած Մարօ Ալազանի յուշագրութիւնը խորհրդային համակերպողնացման ճամբարներուն մասին եւ թերեւս նաեւ ուրիշներ, որոնք մեր ուշադրութենէն վրիպած են:

Ըստ ամենայնի ուշագրաւ հատոր մըն է, որ ընթերցողին առջեւ առանձնայատուկ պատուիւհան մը կը բանայ քիչ ծանօթ երեւոյթի մը: Նաեւ կը յիշեցնէ մեզի 1915ի Մեծ Եղեռնի ոչ այնքան շօշափուած երես մը՝ դատավարութեան ենթարկուած եւ ինչ-ինչ հնարովի պատճառաբանութիւններով բանտ նետուած հայ մտաւորականներու պարագան, որոնց մէկ մասով յաջողած են վերապրիլ կէս գիշերէն մինչեւ արշալոյս:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1@yahoo.com

